ՀՏԴ 93/94

Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում Հայ դատի հանձնախմբի գործունեության արձագանքները Քուվեյթի «Ազդարար» թերթում (2014-2017)

Էլեն Շարոյան

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.1-155

Հանգուցային բառեր. *Քուվեյթ, Հայոց ցեղասպանություն, Հայ դատի հանձնախումբ, Սփյուռք, «Ազդարար» շաբաթաթերթ, պահանջատիրություն*

Նախաբան

Ժամանակակից Սփյուռքում գործող բազմաթիվ հայկական լոբբիստական կազմակերպություններից իր դերով և նշանակությամբ առանձնանում է Հայ Դատի հանձնախումբը: Վերջինիս գործունեության առանցքային ուղղությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացին նպաստելն է:

Հայ Դատի հանձնախումբը մեծ հեղինակություն է վայելում Սփյուռքի հայկական համայնքներում: Այդ է պատճառը, որ հանձնախմբի գործունեությունը ակտիվորեն լուսաբանվում է ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքի հայաշատ համայնքներում հրատարակվող հայկական պարբերականների էջերում:

Թեման արդիական է, քանի որ հայոց պահանջատիրության և Հայ դատի արդար լուծման գաղափարը միավորող գործոն է Հայրենիքում և Սփյուռքում ապրող հայության համար և կարող է նպաստել հայկական լոբբիզմի ու աշխարհում հայության ներկայացուցչությունը նոր մակարդակի բարձրացնելու գործին: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը պետք է հայության ամենօրյա խնդիրը լինի:

Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Հայ Դատի հանձնախմբի գործունեության լուսաբանման ինտենսիվությունը Մերձավոր Արևելքի հայաշատ համայնքներում լույս տեսնող հայկական մամուլի էջերում:

Այս խնդրին անդրադարձել է սփյուռքահայ պարբերականներից մեկը՝ Քուվեյթի մայրաքաղաք Էլ-Քուվեյթում լույս տեսնող «Ազդարար» շաբաթաթերթը:

Թեմայի նորույթը այն է, որ մինչ օրս հայ պատմագրության մեջ չեն ուսումնասիրվել Հայ Դատի հանձնախմբի գործունեության արձագանքները սփյուռքահայ մամուլի էջերում:

Աշխատանքը կատարելիս կիրառվել են պատմական, փաստագրական և պատմահամեմատական մեթոդները:

«Ազդարար» շաբաթաթերթը

Հայերը Քուվեյթում հաստատվել են XX դարի 50-ական թվականների կեսերից՝ տեղափոխվելով Սիրիայից, Իրաքից, Պաղեստինից, Հորդանանից և Իրանից: Ժամանակի ընթացքում այստեղ ձևավորվել է գրեթե ամբողջությամբ հայախոս և հայաշունչ համայնք: Այսօր Քուվեյթում ապրում է շուրջ 4000 հայ: Հայ համայնքը ամբողջությամբ կենտրոնացած է մայրաքաղաք Էլ-Քուվեյթում [15]:

1996 թվականից Քուվեյթում լույս է տեսնում «Ազդարար» ազգային, հասարակական, քաղաքական շաբաթաթերթը: Թերթի առաջին խմբագիրը եղել է Կարո Մարլյանը, իսկ 2008 թվականից թերթի գլխավոր խմբագրի պաշտոնը ստանձնել է Կարո Արսլանյանը: Թերթը լուսաբանում է տեղի հայկական համայնքի կյանքը, տպագրում է լուրեր Հայաստանից և Սփյուռքի տարբեր համայնքներից, կատարում վերլուծություններ, անդրադառնում միջազգային կարևոր իրադարձություններին [2, 618]:

«Ազդարար» շաբաթաթերթը հրատարակվում է Հայ Յեղափոխական դաշնակցության հովանու տակ գործող Քուվեյթի երիտասարդաց միության կողմից [2, 618]:

Հայ դատի հանձնախմբի գործունեությունը

Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացը նորովի ընթացավ 1965 թվականի երևանյան իրադարձություններից հետո և թևակոխեց արդի փուլ Հայաստանի Հանրապետության անկախության մասին 1990 թ. օգոստոսի 23-ի հռչակագրի ընդունումից հետո [3, 113]:

1998 թվականից Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգում հաստատուն տեղ զբաղեցրեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը [3, 77]:

Քուվեյթում լույս տեսնող «Ազդարար» շաբաթաթերթը, լինելով ազգային գաղափարախոսության կրող, ինտենսիվորեն լուսաբանում է Հայոց ցեղասպանության ճանաչման գործում Հայ Դատի հանձնախմբի ջանքերը:

2014 թվականի հունվարի 31-ի համարում թերթը տեղեկացնում է, որ Արգենտինայի Թիերա դել Ֆուեգո նահանգը, հետևելով կենտրոնական կառավարության օրինակին, վավերացրել է բանաձև, որով պաշտոնապես ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, ապրիլի 24-ը հռչակում է «հանդուրժողության և ժողովուրդներու փոխադարձ հարգանքի օր»՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի: Ըստ թերթի՝ անդրադառնալով այդ կարևոր որոշմանը՝ Հարավային Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչ Ալեխանդրո Ավագյանը ողջունել է նահանգի հայանպաստ քայլը: Նա նշել է այն ջանքերը, որոնք ներդրվել են հանձնախմբի կողմից Հայոց ցեղասպանության հարցը պետական և համալսարանական շրջանակներում ներկայացնելու ու պատմական այդ իրողության հետ հանրությանը ծանոթացնելու ուղղությամբ [4, 13]:

Հայոց ցեղասպանության հերթական տարելիցին ընդառաջ «Ազդարար»-ը տեղեկացնում էր, որ Հայոց հարցի պաշտպանության օրը՝ ապրիլի 7-ին, Միացյալ Նահանգների Արևմտյան շրջանի Հայ դատի հանձնախումբը կազմակերպելու է օրվան նվիրված միջոցառումներ: Մասնավորապես, միջոցառումներ պետք է տեղի ունենան Կալիֆորնիայի Սենատում, ինչպես նաև Նահանգային ժողովի շենքում, որտեղ ամերիկյան օրենսդիրները Հայոց ցեղասպանության վերաբերյալ ելույթներ պետք է ունենան, որին հաջորդելու է Հայոց ցեղասպանության մասին բանաձևի քվեարկությունը: Անդրադառնալով սպասվող ձեռնարկներին՝ Միացյալ Նահանգների Արևմտյան շրջանի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Էլեն Ասատրյանը նշում է, որ բացի այն, որ Հայոց հարցի պաշտպանության օրը ոգեկոչվում է Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը, այս գործընթացը նաև նպաստում է Ամերիկայի հայկական համայնքի հզորացմանը՝ ազդեցիկ քաղաքական դեմքերին հավաքելով նահանգի Կոնգրեսի շենքում, հնարավորություն է տրվում համայնքին հանդիպել իրենց ներկայացուցիչների հետ և ներկայացնել իրենց հուզող հարցերը [5, 11]:

2014 թվականի մարտի 14-ին կարևոր նախաձեռնությամբ հանդես եկավ Քուվեյթի Հայ դատի հանձնախումբը՝ Սուրբ Վարդանանց եկեղեցում կազմակերպելով դասախոսական երեկո «Թուրքիայի կորուսյալ հայերը» թեմայով: «Ազդարար»-ը, անդրադառնալով այս իրադարձությանը, գրում է, որ առաջին բանախոս, Հայ դատի հանձնախմբի անդամ Հովհաննես Սերոբյանի զեկուցումը նվիրված էր համշենահայության պատմությանը: Նա հանգամանորեն անդրադարձել է համշենահայության պատմության ուսումնասիրության աղբյուրներին: Պատմական փաստերը վեր հանելով՝ բանախոսը մանրամասնորեն ներկայացրել է համշենահայության կրած հալածանքները, թուրքական իշխանությունների կողմից նրանց մահմեդականացնելու ուղղությամբ վարած քաղաքականությանը, անդրադարձել է նրանց մշա-

կույթին և ծիսակատարություններին: Օրվա երկրորդ բանախոսի՝ Հայ Դատի հանձնախմբի ատենապետ Տիգրան Բայաթյանի զեկուցումը վերաբերում էր Թուրքիայի իսլամացած հայերին: Բայաթյանն անդրադառնում է այն հայերին, որոնք մեկ դար առաջ իրենց ինքնությունը գաղտնի պահելով ապրում են Թուրքիայի արևելյան շրջաններում՝ստանձնելով թուրքական և քրդական ինքնություն [6, 1-2]:

«Ազդարար»-ը, անդրադառնալով Հայ Դատի ըմբռնման և այն սերունդներին ներկայացնելու հարցին, ապրիլի 11-ի համարում հրապարակեց Լիբանանի Հայ Դատի հանձնախմբի նախաձեռնությամբ կազմակերպված «Հայ Դատն այսօր» հաղորդաշարի շրջանակներում Ազգային Լևոն և Սոֆիա Հակոբյան քոլեջի տնօրեն Վիգեն Ավագյանի հարցազրույցը: Խոսելով հայկական դպրոցներում Հայ Դատի գաղափարը ներկայացնելու և աշակերտների շրջանում այն մատուցելու մասին՝ Վ. Ավագյանը շեշտեց, որ հայկական դպրոցի գոյությունը կապված է Հայ Դատի հասկացողության հետ, քանի որ հայկական դպրոցը միայն գիտելիք, տեղեկություն և պետական ծրագիր փոխանցող հաստատություն չէ: Այս բոլորի կողքին այն հայկական դիմագիծ, նկարագիր և ինքնություն կերտող միջավայր է, հայ մարդ պատրաստող «հնոց մը», որտեղ կազմավորվում են մարդիկ, որոնք Հայ Դատի պահանջատիրությանը տեր պիտի կանգնեն: Վ. Ավագյանը անդրադարձավ այն ցավոտ հարցին, թե ինչո՞ւ այսօր մեծ թվով հայ աշակերտներ տեղեկացված չեն Հայ Դատի առանցքային գաղափարերի մասին, և արձանագրեց այն իրողությունը, որ քիչ թիվ չեն կազմում օտար վարժարաններ հաճախող հայ աշակերտները: Նրա կարծիքով որոշ ժամանակ անց դա կարող է նրանց ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում լուրջ խոչընդոտ հանդիսանալ: Վ. Ավագյանը նշում է, որ բավարար չէ ապրիլի 24-ին նստել տանն ու ասել, թե մենք հայկական վարժարան չենք գնում, բայց հայի պես ենք մեծանում, կամ շաբաթը 5-6 օր արաբական վարժարան հաճախել, իսկ շաբաթվա մեջ մի քանի ժամ հայկական միության մաս կազմել և իրենց հայ համարել: Հայ աշակերտը պետք է մտերմանա և ծանոթանա Նարեկացու, Մեծարենցի, Վարուժանի, Խրիմյան Հայրիկի, հայկական երգ ու պարի, ազգային արժեքների հետ: Ուստի, ըստ Վ.Ավագյանի՝ Հայ Դատի գաղափարը պատանի սերնդի մոտ վերաիմաստավորելու գործընթացը պետք է սկսել նրանց հայկական համայնքի և հայկական ազգային գաղափարախոսության հետ ծանոթացնելուց [7, 11-13]:

«Ազդարար»-ը մայիսի 5-ի համարում տեղեկացնում է, որ Ուրուգվայի խորհրդարանը հարգանքի տուրք է մատուցել Հայոց ցեղասպանության հիշատակին: Թերթը շեշտում է այն հանգամանքը, որ 13 տարի շարունակ Ուրուգվայի օրենսդիր մարմնի և Ուրուգվայի Հայ Դատի հանձնախմբի նախաձեռնությամբ Ուրոգվայի Սենատի դահլիճում կատարվում է ոգեկոչման միջոցառում: Դրան մասնակցում են մեծ թվով պետական և դիվանագիտական գործիչներ, հայ համայնքի քաղաքական և հոգևոր գործիչներ: Հանդես գալով ելույթներով՝ ներկաները նախ իրենց անվերապահ զորակցությունն ու համագործակցությունը հայտնեցին Հայ Դատին, պատմական ակնարկ անելով 1915 թվականի դեպքերին և դրանց պատճառած ողբերգական հետևանքներին: Միջոցառման մասնակիցները միասնական դիրքորոշում հայտնեցին առ այն, որ միջազգային հանրությունը պետք է պատասխանատվություն ստանձնի՝ ստիպելով Թուրքիայի կառավարությանը ոչ միայն ճանաչել մարդկության դեմ իր կատարած ոճրագործությունը, այլ նաև քայլեր ձեռնարկի դրա հետևանքները մեղմելու ուղղությամբ [8, 8]:

Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ «Ազդարար»-ը հանդես եկավ ծավալուն վերլուծական հոդվածով, որի գլխավոր հարցադրումն այն էր, թե ի՞նչ ռազմավարությամբ ենք ներկայանում Մեծ Եղեռնի 100-ամյակին: Թերթը փորձում էր գտնել այն հարցի պատասխանը, թե ո՞րն է այն պետական, հասարակական, ազգային-քաղաքական ռազմավարությունը, որի իրագործմամբ պետք է կարողանանք առաջնորդել Հայ Դատի պայքարն

իր արդար լուծմանը: Թերթը, պատմական էքսկուրս անցկացնելով, անդրադառնում է 1965 թվականի ապրիլի երևանյան իրադարձություններին, նշում է, որ այդ օրերին առաջին անգամ հայությունը, դուրս գալով փողոց, կազմակերպեց «Մեր հողերը, մեր հողերը» պահանջող բողոքի ցույցեր: Թերթը, սակայն, ցավով արձանագրում է Խորհրդային Միությունում ապրող հայությունը, բողոքի այդ պոռթկումից բացի, ի վիճակի չեղավ Հայ Դատի հետապնդման ռազմավարություն մշակել:

«Ազդարար»-ը արձանագրում է այն փաստը, որ նման պայմաններում Սփյուռքի հայությունը կյանքի կոչեց Հայ Դատի ուժային պայքարի ռազմավարությունը, որը Հայոց ցեղասպանության շուրջ քաշված լռության պատի քանդումն էր՝ նպատակ ունենալով քաղաքական ճնշման ազդեցության ներքո միջազգային հանրության ուշադրությունը սևեռել Հայկական հարցի արդար լուծման խնդրի վրա:

Հայոց ցեղասպանության հիսնամյակին հաջորդած ժամանակաշրջանում Հայ Դատի ուժային պայքարի ռազմավարության գլխավոր լծակը, ըստ թերթի, հայրենի հողի վրա համախումբ ապրող և պահանջատեր կանգնող հայությունն է, ավելի հստակ՝ «պայքարը հողի վրայ առաջ մղելու հայ ազգային ուժականությունն է»: Դա է պատճառը, որ միջազգային հարթակներում հակաթուրքական ուժային գործողությունները Թուրքիայի կողմից գրավված հայկական հողերում ազատագրական պայքարով փոխարինելու փորձերը հաջող շարունակություն չունեցան: Թերթն ափսոսանքով արձանագրում է, որ Հայաստանի անկախացումով Հայ Դատի ուժային պայքարի սփյուռքյան ռազմավարությունը հույս էր փայփայում, որ վերջապես պահանջատեր հայությունը պիտի կարողանա պետականորեն իրավատեր ներկայանալ հայ ժողովրդի դեմ Օսմանյան Թուրքիայի կողմից պետական մակարդակով կազմակերպված և իրականացված ցեղասպանությանը՝ առաջ քաշելով մարդկային, հողային և քաղաքական հատուցում [9, 8-9]:

2015 թվականի հունվարի 21-ին Քուվեյթի Հայ Դատի հանձնախմբի նախաձեռնությամբ կազմակերպվում է կլոր սեղան «Ի՞նչ կորցրինք Ցեղասպանության հետևանքով» խորագրով: Քուվեյթի Հայ Դատի հանձնախմբի ատենապետ Տիգրան Պայաթյանը, կարևորելով Հայոց Ցեղասպանության 100 ամյակի շեմին նմանօրինակ քննարկումների կազմակերպումը, շեշտեց, որ մեր ունեցած կորուստների չափը ուսումնասիրելն ու ճշգրտելը հնարավորություն կտա ճշգրիտ կերպով կազմելու հատուցման իրավական փաթեթը: Բանախոսները իրենց ելույթների ընթացքում ներկայացրին մարդկային, հոգևոր, մշակութային, նյութական և հոգեբանական կորուստները, որոնք արձանագրվել են Ցեղասպանության տարիներին [10, 2-3]:

«Ազդարար» շաբաթաթերթը մարտի 6-ի համարում տեղեկացնում է, որ Սիրիայի Հայ Դատի հանձնախմբի կողմից փետրվարի 12-ին կազմակերպվել է «Հայ Դատի լսարան»-ի 6-րդ նիստը, որի նպատակն, ըստ թերթի, միասնականություն ցուցաբերելու կոչ ուղղելն է հանուն հայոց ազգային գերխնդիրների: Նիստի ընթացքում ելույթ ունեցավ ազգային գործիչ Գրիգոր Տունկյանը, որ իր զեկույցում անդրադարձավ երեք կարևոր հանգամանքի: Առաջինն այն էր, որ թեև 1915 թվականի Ցեղասպանությունը միտված էր հայոց բնօրրանը վերջնականորեն դատարկել ազգաբնակչությունից, հայ ժողովրդի պահանջատիրության լավագույն օրինակը դարձավ տարիներ անց՝ 1918 թվականին հայկական պետականության վերականգնումը: Երկրորդ՝ հայկական պետականության վերականգնումը Գ. Տունկյանը համարում է մեր պահանջատիրական երթի կարևորագույն հանգրվանը: Երրորդ՝ մեր պատմության մեջ մենք ունեցել ենք չորս հարստություն, իսկ հանրապետության հաստատումը համարվում է հինգերորդ հարստությունը: Բանախոսը շեշտում է, որ մեր ժողովուրդը «նվաճած է միայն մեկ հանրապետություն, սակայն՝ երեք հանգրվաններով», առաջինը՝ անկախ Հայաստանի Հանրապետության հանգրվանը, երկրորդը՝ խորհրդային հանգրվանը, որի ըն-

թացքում Հայաստանը կորցրեց իր անկախությունը, սակայն հայկական պետականությունը շարունակեց պահել հայ տեսակը: Ապա Ցեղասպանության հիսունամյակը եկավ համախմբելու և համատեղելու մեր ազգային ձգտումը, իսկ երրորդ հանգրվանը 1990 թվականի օգոստոսի 23-ի հռչակագրով հաստատված Հայաստանի անկախ հանրապետությունն է, որ հայ ժողովրդի առջև մի նոր ճամփա բացեց հայոց պահանջատիրության և Հայ Դատի լուծման հարցում [11, 12-13]:

2016 թվականի մայիսի 6-ի համարում «Ազդարար»-ը ընթերցողներին տեղեկացնում է, որ Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի փոխանցմամբ Արևմտյան Վիրջինիան դարձել է պաշտոնապես Հայոց ցեղասպանությունը ճանաչած ամերիկյան 44-րդ նահանգը: Թերթի փոխանցմամբ՝ նահանգապետ Ռեյ Թոմպլի հատուկ հայտարարությամբ ապրիլ ամիսը հռչակվել է «Ցեղասպանությունների մասին իրազեկման և կանխարգելման ամիս» [12, 4]:

2016 թվականի հուլիսի 15-ի համարում «Ազդարար»-ը տեղեկություն հրապարակեց այն մասին, որ Հայ Դատի Եվրոպայի և Բելգիայի հանձնախմբերից կազմված միացյալ պատվիրակությունը այցելել է Բելգիայում Գերմանիայի դեսպանատուն և հանդիպում ունեցել դեսպան Ռյուդիգեր Լյուտեքինկի հետ: Այցելության հիմնական նպատակն էր Բունդեսթագի կողմից Հայոց Ցեղասպանության բանաձևի որդեգրման առիթով գնահատանքի խոսք հղելը գերմանացի ժողովրդին: Դեսպանը, շնորհակալություն հայտնելով այցելության համար, նշում է, որ այդ բանաձևը միտված է նաև Գերմանիայի մասնակի մեղսակցությունը ընդունելուն և աշխատելուն, որ Թուրքիան ևս առերեսվի իր անցյալի մութ էջերի հետ [13,13]:

2017 թվականի սեպտեմբերի 8-ի համարում «Ազդարար»-ը տեղեկացնում է, որ սեպտեմբերի 2-3-ը կայացել է Միջին Արևելքի Հայ Դատի խորհրդաժողով, որի ընթացքում քննարկվել են Միջին Արևելքում ապրող հայությանը և Հայ Դատին վերաբերող տարբեր հարցեր և մարտահրավերներ: Ելույթով հանդես է եկել Հայ Դատի կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատուրյանը, ով, խոսելով Հայ Դատի հասկացողության ներկայիս սահմանման մասին, շեշտում է, որ Հայ Դատը նախ և առաջ սահմանվում է, ոչ միայն Հայոց ցեղասպանություն և պահանջատիրություն, այլ նաև Հայաստանի անկախության միջազգային հեղինակության բարձրացում, հայկական լոբբիզմի տարածում, Արցախի հանրապետության միջազգային ճանաչում: Անդրադառնալով Հայոց Ցեղասպանության ճանաչման գործընթացին՝ Հ. Տեր-Խաչատուրյանը նշում է, որ այն արդեն բավական ճանապարհ է անցել և մեծ հաջողություններ է գրանցել մանավանդ վերջին 20 տարիների ընթացքում: Ներկայումս, ըստ Հ. Տեր-Խաչատուրյանի՝ բացվում է ամբողջությամբ նոր էջ, որը պահանջատիրության ծրագրային և սկզբունքային սահմանումից զատ, խնդիր է դնում այդ հոլովույթը օրինական մակարդակի հասցնել [14, 1-3]:

Եզրակացություն

«Ազդարար» շաբաթաթերթը ազգային գաղափարախոսության դիրքերից լուսաբանում է 2014-2017 թվականների ընթացքում Հայոց Ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում Հայ Դատի հանձնախմբի գործունեությունը: Թերթը հայոց պահանջատիրությունը չի դիտարկում որպես սփյուռքահայության և Սփյուռքում գործող հայկական լոբբիստական կառույցների մենաշնորհ, այլ դիտարկում է որպես համայն հայության միասնականությունն ու ջանքերն արտացոլող գործընթաց:

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.1-155

Գրականություն

1. Հայ գրատպություն և գրքարվեստ հանրագիտարան, խմբ.՝ Հովհաննես Այվազյան, Երևան, 2015:
2. «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003:
3. Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետություն, Երևան, 2013:
4. «Ազդարար», 2014, 31 հունվարի, № 216:
5. «Ազդարար», 2014, 14 փետրվարի, № 218:
6. «Ազդարար», 2014, 21 մարտի, № 223:
7. «Ազդարար», 2014, 11 ապրիլի, № 226:
8. «Ազդարար», 2014, 2 մայիսի, № 229:
9. «Ազդարար», 2014,13 հունիսի, № 235:
10. «Ազդարար», 2015, 30 հունվարի, № 268:
11. «Ազդարար», 2015, 6 մարտի, № 273:
12. «Ազդարար», 2016, 6 մայիսի, № 332:
13. «Ազդարար», 2016, 15 հուլիսի, № 342:
14. «Ազդարար», 2017, 8 սեպտեմբերի, № 401:
15. http://diaspora.gov.am/hy/pages/49/kuwait:

Реакция кувейтской газеты «Аздарар» на деятельность Армянского национального комитета «Ай Дат» по вопросу признания Геноцида армян (2014-2017)

Элен Шароян

Резюме

Ключевые слова: *Кувейт, Геноцид армян, Армянский национальный комитет, Диаспора, еженедельная газета «Аздарар», требование*

Среди множества армянских лоббистских организаций, действующих в современной Диаспоре, Армянский национальный комитет выделяется своей ролью и значением. Ключевым направлением деятельности комитета является содействие процессу международного признания и осуждения Геноцида армян.

Армянский национальный комитет пользуется большим авторитетом в армянских общинах Диаспоры.

Деятельность комиссии активно освещается на страницах издающегося в Кувейте еженедельника «Аздарар» («Вестник»).

Общественно-политический еженедельник «Аздарар» издается на республиканском уровне с 1996 года. Газета освещает жизнь местной армянской общины, публикует новости Армении и различных общин Диаспоры, проводит анализ и освещает важные международные события.

Процесс признания и осуждения Геноцида армян возобновился после ереванских событий 1965 года и вступил в современную стадию после принятия 23 августа 1990 года Декларации независимости Республики Армения.

С 1998 года вопрос международного признания Геноцида армян занимал постоянное место в повестке внешней политики Республики Армения.

Еженедельная газета «Аздарар» освещает деятельность Армянского национального комитета по признанию и осуждению Геноцида армян с позиций национальной идеологии, не считает выдвижение армянских требований монополией армян Диаспоры и армянских лоббистских структур, действующих в Диаспоре, но считает это процессом, отражающим единство и усилия всех армян.

Echoes of the "Azdarar" Newspaper in Kuwait Concerning the Activities of the Armenian National Committee on the Issue of Recognition of the Armenian Genocide (2014-2017)

Elen Sharoyan

Summary

Key words: Kuwait, Armenian Genocide, Armenian National Committee, Diaspora, weekly newspaper "Azdarar", demand

The Armenian National Committee stands out for its role and significance among the many Armenian lobbying organizations operating in the modern Diaspora. Promoting the process of international recognition and condemnation of the Armenian Genocide is the key activity of the latter.

The Armenian National Committee is highly influential in the Armenian communities of the Diaspora.

The activities of the Committee are actively covered on the pages of the newspaper "Azdarar" published in Kuwait.

Since 1996, the socio-political weekly "Azdarar" has been published at the republican level. The newspaper covers the life of the local Armenian community, publishes news from Armenia and various Diaspora communities, conducts analysis and covers important international events.

After the events in Yerevan in 1965 the process of recognition and condemnation of the Armenian Genocide resumed. It entered the modern stage after the adoption of the Declaration of Independence of the Republic of Armenia on August 23, 1990.

Since 1998, the issue of international recognition of the Armenian Genocide has a permanent place on the foreign policy agenda of the Republic of Armenia.

The weekly newspaper "Azdarar" covers the activities of the Armenian National Committee for the recognition and condemnation of the Armenian Genocide from the standpoint of national ideology. The newspaper does not consider the advancement of Armenian demands to be a monopoly of Diaspora Armenians and Armenian lobbying structures operating in the Diaspora, but considers it a process reflecting the unity and efforts of all Armenians.

Ներկայացվել է 13.10.2023 թ.
Գրախոսվել է 13.11.2023 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.